թափում են որ անպատճառ այս տիրացուն ձեռնադրել տան։ Ո՞վքեր են այդ օգնականները։ Ե՞րբ մարդ, միայն երեք մարդ, որոնք հասարակութեան իսկական համոզմունքը մեզնում են իրանց ազդեցութեամբ և քաջ են տալիս իրանց ետևից։ Ժողովուրդը մինչև նայում է իրանց կառավարչի ձեռքը և մանանան աչքի առաջ առնելով նրա ոյժը և զօրութիւնը։

Երկրորդ քահանայացուն է պ. Աստուածատուր Խանզադեանց, որ աւարտել է Թիֆլիսի Ներսէսեան դպրոցում և չարունակ պարապել է ուսուցչութեամբ։ Սորա մասին երկար խօսելս աւելորդ է, ամենքն էլ ճանաչում են սրան։ Նոյն իսկ սիրնոգականներից չատերը գիտեն և ծանօթ են։ Միայն կոյրերը, բթամտները, կրքոտները չեն կարողանում այս երկու քահանայացուների զանազանութիւնը և արժանաւորութիւնը նկատել։ «Վա՛յ, մեր խօսքը կատարվի՞ ոչ, մեր անունը կոտրի՞. խալիը մեզ վրա ծիծաղեն, թէ կարացին ոչ մի բան էլ է գլուխ հանել, բա, մենք մեր գլխի փարփալա չունենք, թասիպ չունենք, ամոթ մի մեզ...»։ Ա՛ռ թէ ինչի են պատերազմում ՀՅմարտութեան դէմ։ Ես ինքդիդ նամակս խորհուրդ եմ տալիս տիրացու Ցոլմանդէսի պաշտպաններին՝ թողնել անձնական կրքերը, և հասկանալ որ իրանց ընտրած տիրացու խաչապանը ամենևին արժանի չէ քահանայութեան և չատ ստոր է կանգնած Ա. Խանզադեանցից։—Ցաւում եմ ձեզ վրա, պ. պ. զարաքիլիսեցիք, որ այս ամենապարզ հարցը չէք հասկանում կամ չէք կամենում հասկանալ։—Էլ միւս անգամ Ջալալ-օղլեցիներիս վրա չը ծիծաղէք։ Այժմ բոլոր փամբակեցիք ծիծաղում են ձեր հիւանդագա հասկացողութեան վրա։

Ա՛ռ այժմ այսքան։

Մեր գիւղի երկանա զարոցները վատ չեն, միայն չեմ կարծում թէ արդիւնք երևայ, որովհետև մէկ առաջուն մի քանի անգամ փոխվում է մէկ վարժապետից դէպի միւսը։ Եթէ նամակս չերկարէր, մի քանի կարևոր տեղեկութիւններ էլ մեր գիւղից կը հաղորդէի։

Ջալալ-օղլեցի

ՆԱՄԱԿ ԽԱՆԹԱՆԴԻՑ

—

31 մայիսի

Շուշուց եօթը վերստ հեռաւորութեամբ դէպի հիւսիս գտանվում է Խանքանդին, որ պատկանում է Մխտարովների խանին և 1848 թուից տէրութեան կապալով տուած է զօրանոցի համար։ Այստեղ այժմ բնակվում են ախալցխեան զունդը և տեղական կազակների բատարիան։ Բացի զօրքերից այստեղ բնակվում են 70—100 տուն հայ, 50 տուն թիւրք և 20 տուն ռուս. այստեղ նոյնպէս բնակվում են Ներքի-Շէն գիւղի բնակիչների մի մասը, որոնք չը կարողանալով իրենց կամակոր բէկի հարստահարութիւնը դիմանալ, մի քանի տարի սրանից առաջ գաղթեցին այնտեղից և թողեցին իրենց գիւղը աւերակ։ Խանքանդուց երեք չորս վերստ հեռաւորութեամբ գտանվում են՝ Կրկիան գիւղը 500 հայ բնակիչներով խնամախ 400 բն. Բալուշա 800 բն. և խալիփալու ու փաչլու գիւղերը։

Զը մարիկ տուած, որ Շուշու և Խանքանդու մէջ տարածութիւնը չատ աննշան է (ընդ ամենը եօթ վերստ) բայց այնու ամենայնիւ կլիմայի մէջ մեծ զանազանութիւն կայ։ Այստեղ եղանակը տաք է լինում և օդը աւելի չոր քան Շուշում։ Շուշուց այստեղ գաղթում են այն ընտանիքները, որոնք կրծքացաւ ունեն։ Ցների մեծ մասը փայտաչէն են, բայց աւելի գեղեցիկ և յարմար քան Շուշու մեծ մեծ և բարձր ամրոցները. փողոցները լայն են և ուղիղ, կայ մի մեծ և գեղեցիկ հասարակական պարկ։ Շինվում է հայոց եկեղեցի, որը զուցէ այս տարի վերջանայ։ Բացի այս Խանքանդին ունի մի մտական թատրոնական բեմ, ուր յաճախ յաճախ լինում են ներկայացումներ ռուս լեզուով, մի գրադարան, ուր զբաղդարար մի հայերէն թերթ չը տեսայ, թէև անգամների մէջ կան 5-8 օֆիցերներ և մի քանի հայ ընտանիք, մի կլուբ, ուր ամեն յարաթ լինում են ընտանեկան երեկոներ և պարահանդէսներ, կայ մի թել մանելու գործարան, ուր հարիւրաւոր կանայք և աղջկերք աշխատում են, գտանվում է դղեակի հաշտարար դատարանը և այլ հասարակական հիմնարկութիւններ, բացի ուսումնարանից, որի մեծ կարօտութիւն կայ, սրա վրա դարձնում ենք պ. Թեմական տեսչի ուշադրութիւնը և խորհուրդ կը տայինք հէնց առաջիկայ տարվանից աշխատել և բանալ այստեղ մի ծխական դպրոց, ուր կարող են սովորել ոչ միայն խանքանդու, այլ և չրջակայ գիւղերի երեխաներն էլ։

Զը մարիկ տուած այստեղի բնական և արհեստական գեղեցկութեան ու զուարճութեանց վրա, սակայն մի տասը օր ես այստեղ բնակվելով և բաւականին ծանօթանալով հասարակութեան հետ հասայ այն եզրակացութեան, որ այստեղի հասարակութիւնը աւելի պարապված է չէնին, անպէտք և աննպատակ գործերով։ Թղթախաղ այս գիւղեցիկ գիւղաքաղաքի մէջ մեծ ընդունելութիւն էր գտել, բասրասանքը նոյնպէս պակաս պատուաւոր տեղը չէր բռնում։ Այստեղացիների լեզուից ամեն օր միայն նախընթաց օրվայ թղթախաղի անցքը և սատիկ բասրասանքի ու հայհոյանքի պատմութիւններ էք միայն լսում. բայց այնու ամենայնիւ այստեղ կեանքը աւելի ուրախ է, ազատ է և հասարակութիւնը աւելի եւրոպական ձևով է ապրում, քան Շուշումի։

Ուրան ես տեղեկացայ արժանահաւատ աղբիւրներից, այս տարվայ թանգութիւնը Խանքանդուն այնքան չէր զգացել դրան մի մանաւոր անարիւ մարդու ճարպիկութիւն։ Ինչպէս ասում են, այս անխղճմտանք անձնաւորութիւնը օգուտ քաղելով պատահած, բայց ինքն էլ չը երազած հանգամանքից, սկսել է հարստահարել ամբողջ դղեակի աղքատ դասակարգին։ Այս պարոնը չը գիտեմ ինչ կերպ կարողացել է մօտ ծանօթութիւն և մինչև անգամ իրրև հարազատ բարեկամութիւն սկսել այնտեղի գնդապետի հետ և նրա բարեկամութիւնը ապիթ բերելով, պարծենում է իր ընկերակից հասարակ ժողովրդեան առաջ ու նրանց հարստահարելով իր ցանկացածը անում։ Այժմ որքան հաստատ փաստերից տեղեկացայ, այս գիւղաքաղաքի դեղը կատարեալ այդ ապերասի ձեռքն է գտնվում։ Գնդապետին իր գործից չիներով, նրա անունով ինչ անազնիւութիւններ և մինչև անգամ ընբարոյականութիւններ կարողանում է, չէ խնայում թաթել խեղճ հասարակութեան գլխին։ Հարկաւոր եմ համարում առաջ բերել մի քանի փաստեր, քաջայայս լինելով, որ դղեակի պ. գնդապետը զոնէ այսուհետև ուշք կը դարձնէ յիշեալ անձի գործողութիւնների վրա։

Օրինակի համար, այդ պարոնը գնդապետի անունով վերցնում է մի հացավաճառից կաշառք և իրաւունք տալիս, որ ամբողջ դղեակի մէջ միայն նա հաց ծախի. միւսին իրաւունք է տալիս, որ միայն նա միս ծախի և այլն և այլն, ու այսպէս մի հացավաճառ, մի միս ծախող լինելով, գները սաստիկ բարձրանում են, հասարակութիւնը հարստահարվում է ու ճարահատեալ մէկին մէկ աւել գներով իր օրվայ հացը մատակարարում։ Թել մանելու գործարանին ջուր չէ տալիս, ամբողջ օրերով գործարանը թողում է փակ ու հարիւրաւոր աղքատները զրկում իրենց մի քանի օրվայ աշխատանքից մինչև իր ցանկացածը չէ ստանում։ Անցեալ ձմեռը գնդապետի անունով, ասում են, հրամայել էր մի քանի հայ և թիւրք ընտանիքների, որոնք զուցէ տասը քսան տարի է անընդհատ բընակվում են խանքանդում, որ չուտով այստեղից գաղթեն, բայց չնորհիւ կաշառքի մի քանի ամիս լռում է ու մէկ էլ հիմա նորից սկսում է խեղճ անպաշտպաններին չարչարել ու հրամայել, որ դարձեալ գաղթեն։ Ցանկալի էր իմանալ, արդեօք այդպիսի իրաւունք տուած է այս պարոնին, թէ ոչ և կամ արդեօք սորա արարմունքը յայտնի է այս դղեակի ոստիկանութեանը կամ գնդապետին։ Կարծեմ կառավարութիւն թոյլատրութեամբ պիտի այստեղ բնակված լինեն, ուրեմն ինչու մի անհատ պիտի կարողանայ ինքնագլուխ իշխել ամբողջ հասարակութեան վրա։ Ինչու մի մանաւոր մարդ դղեակի կառավարչին իր գործից չինելով նրա անունով պիտի հարստահարի հասարակութիւնը և իր գրպանը լցնի։

Արցախեցի

ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

—

29 ապրիլի

«Մշակի» 48 համարում կարդացի երեք ստորագրութեամբ մի նամակ Իգդիրից, որի մէջ պ. պ. նամակագիրը, դատափետելով Երևանի թեմական տեսչի օգնական պ. Պ. Պերճ Պաչուեանցին, ասում է և մինչի այլոց. «Մինչև այժմ պարոնը ոչ մի տեղ չէ գնացել և այն։

Թէ պ. Պաչուեանցը իր մեծ ժողովրդասիրութեամբ և ազգային կեանքի ծանօթութեամբ որչափ յարմարաւոր է իր ստանձնած ծառայը պաշտօնին, և թէ իր պաշտօնավարութեան սկսած օրից ցայսօր որչափ ընդարձակ է եղել նորա գործունէութեան չրջանը, այդ եթէ յայտնի չէ երեք ստորագնիչին, սակայն քաջ յայտնի է Երևանի թեմի այն բոլոր քաղաքներին, որոնց այցելել է պ. Պաչուեանցը իր պաշտօնով ոմանց մէկ, իսկ ոմանց երկու անգամ։

Պ. Պաչուեանցի երկու անգամ այցելած գաւառներից մէկն է նաև Լուսիվանը գաւառը։ Պարոնը առաջին անգամ եկել է Իգդիր անցեալ 1879 թուի Նոյեմբերի 16-ին, ուր մնացել է 10 օր, և այդ միջոցում նա այցելել է մերձակայ գիւղերից օրական մի երկուսն և գործերն աւարտելուց յետոյ, ուղևորվել է դէպի մուս գիւղերը. իսկ երկրորդ անգամ եկել է Իգդիր ներկայ ամի մարտ 16-ին և մնացել է երեք օր, և դարձեալ մի և նոյն ձևով այցելելով գաւառի գրեթէ բոլոր գիւղերը, վերադարձել է Երևան։

Այս այսպէս լինելուց յետոյ ինձ չատ զարմացնում է այն երևոյթը թէ ինչպէս է պատահում, որ երեք ստորագնիչը միչտ Երևանում իր աչքի առջև է տեսնում պ. Պաչուեանցին, երբ վերջինս թեմի հարիւրաւոր վերստ հեռու քաղաքներում և գիւղերումն է գտանվում. երևի երեք ստորագնիչի աչքերը Հերչեան հեռադիտակի տեղ են ծառայում նորան։

Դ. Քալանթարեանց

ՆԱՄԱԿ ԹՄՐԱԳՐԻՑ

—

Դաւրէժ, 26 ապրիլի

Անցեալ չարաթ ես ձեզ ուղարկել եմ 41 ռուբլի յոգուտ Վասպուրականի, որ հաւաքված էր մեր ուսումնարաններից, այսօր էլ ներկայ նամակիս հետ ուղարկում եմ 15 ռուբլի թղթադրամ, որոնք հաւաքած են մեր քաղաքի Լիլիավա թաղի արական և իգական սեռի զարդոցների երկսեռ աշակերտներից, որ նուիրում են վանայ սովատանջ ազգայիներին, խնդրելով որ ինչպէս առաջին փաստուին ուղարկած 41 ռուբլին, նոյնպէս և այս 15 ռուբլին հասուցանէք ուր հարկն է։ Անուանիկ նուիրատուների ցուցակը։

Արզար Տէր-Եսայեան 2 դրամ, Մովսէս Աղաչեան 2 ղ., Մամիկոն Տէր-Զաքարեանց 4 ղ., Խաչատուրեան 2 ղ., Մարտիրոս Արթամեան 3 ղ., Աէքսան Սարգսեան 2 ղ., Աէքսան Մելքումեան 2 ղ., Աղայան Կարապետեան 2 ղ., Աղայան Մարգարեան 2 ղ., Շմաւոն Գրիգորեան 2 ղ., Մի անյայտ 1 ղ. 15 չահի, Հայրապետ Արզումանեան 1 ղ., Աէքսան Մարգարեան 1 ղ., Պօղոս Թադէոսեան 1 ղ., Մինասյան Յարութիւնեան 1 ղ., Պետրոս Աղամեան 1 ղ., Սեդրակ Բաղդասարեան 1 ղ., Աթանաս Սարգսեան 1 ղ., Հաւարձում Բալայեան 1 ղ., Դաւիթ Մնացականեան 13 չահի, Արզար Անդրէասեան 13 չ., Գասպար Մնացականեան 7 չ., Դաւիթ Սաւադեան 10 չ., Ստեփան Յակոբեան 7 չ., Անդրէաս Մելքումեան 10 չ., Աղայան Թոխմաչեան 4 չ., Փիլոսոս Պողոսեան 6½ չ., որոց գումարն է 36 ղ. 5½ չահի։ Օրիորդաց զարդոցի աշակերտուհիներից—կատարեալ Ղազարեան 2 ղ., Անուշկա Բալասանեան 1 ղ. 10 չ., Նուշան Բուռադեան 10 չ., Սոնա Բալասան 13 չ., Գայանէ Սարգսեան 13 չ., Յաւանիր Հայրապետեան 13 չ., Վարդանուշ Թադէոսեան 10 չ., Նազլու Մկրտչեան 10 չ., Մարգարիտ Մելքոնեան 10 չ., Մաքինա Ջանանեան 10 չ., գումարն է 7 ղ. և 19 չահի, վերի գումարի հետ միասին դառնում է 44 ղ. և 4½ չահի, որը ռուսաց թղթադրամի վերածելով, լինում է ճիշդ 15 ռուբլի։ Այս 15 ռուբլին ներփակած եմ նամակիս մէջ։

Արմենակ

ՆԱՄԱԿ ԹՄՐԱԳՐԻՑ

—

Թիֆլիս, 2 յունիսի

Կարդալով ձեր լրագրի մէջ մեր Հայաստանի սովալուկ հայ եղբայրների և քոյրերի դրութեան նկարագրութիւնը, հաւաքեցի այս փոքրիկ գումարը. նուիրատուաց ցուցակը խնդրում տպել ձեր պատուական լրագրի մէջ և հասցնել ուր հարկն է։

Գէորգ Սուքիասեանց 5 ր., Հ Սոկոլովսկի 1 ր., Ստեփան Գիւնդաղարեանց 1 ր., Բաղդասար Լուսաբարեանց 1 ր., Աղեքսանդրա 1 ր., մի ոմն 1 ր., Արշակ Տէր-Ղևոնդեանց 3 ր., Միրզայ Բաբայեանց 20 կ., Ֆեդոտ Վլադիմիրով 2 ր., Սերգէ Աւաքելով 1 ր., Նեստոր Ինոսարիձե 1 ր., Տ. Բաղդասարով 1 ր., Աէքսան Հախնազարեանց 2 ր., Խան Կակալով 1 ր., Սարգիս Խաչատրեան 1 ր., Ստեփան Մուսարիձէ 1 ր., Թէչո Հայրապետեանց 2 ր., Մինաս Տէր-Յովհաննէսեանց 1 ր., Սօսիկ Մայսուրաձէ 5 ր.։ Ընդամենը 31 ր. 20 կ.։

Գէորգ Սուքիասեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ֆրանսիական նոր հիւպատոս պ. Շարլ Դը-Կուտուլի արդէն հասել է Թիֆլիս և ընդունել է իր պաշտօնը։

—

Ստացանք այս օրերս մի զարմանալի զրքոյկ ՄՕՍԿՎԱՅԻՑ. դա ոտանաւորների ժողովածու է հետևեալ վերնագրով «Գոն-Ղիմանուելի բանաստեղծութիւններից մի քանի ոտանաւորներ։» Մենք հայոց չատ բանաստեղծութիւններ ենք տեսել մեր կեանքում, բայց այդ տեսակները դեռ երբէք տեսած չենք. ոչ միայն կայ նրանց մէջ, ոչ էլ ոչի գեղեցկութիւն։ Մի խակ, անմիտ գրականական ստեղծագործութիւն, լի ուղղագրական, լեզվական և տպագրական սխալներով։ Ոտանաւորներից ոմանք այն տեսակ են, որ եթէ գլխով պատին էլ տայ ընթերցողը, դարձեալ ոչինչ չի հասկանայ թէ ինչ է կամենում ասել հեղինակը, որ իրան պ օ է տ է անուանում։ Ափսոս թուղթ և տպագրական աշխատանք....

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ գրում են. ճեմարանի հարցաքննութիւնները սկսվել են. վեցերորդ դասատուից աւարտող աշակերտներին բոլորովին պէտք է արձակեն վկայականներ տալով. ճեմարանի կառուցումը դադարեցրած է. ասում են, կրկին պիտի նուիրատուութիւնը հաւաքեն այդ չինութեան անունով։ Այս օրերումս եպիսկոպոսների ձեռնադրութիւն կը լինի. տեղայիններից յայտնի չէ ումը կը ձեռնադրեն, բայց Ցանկասանից մի վարդապետ եկել է, երկու ուրիշն էլ սպասում են։

—

ՍԱԼՄԱՍՏԻՑ պ. Բաղալ Արզումանեանը գրում է. յոգուտ Աղբակայ գաղթականների պ. պ. Տէր-Միքէլեան եղբայրների նուիրած, և «Մշակի» խմբագրատան միջոցով ուղարկված 50 ռուբլին ըստացել է և բաժանել աղքատներին։ Այդ գաղթականները այժմ սկսել են վերադառնալ դէպի իրանց հայրենիքը։

—

Ս. Պետերբուրգի «St. Petersburger Herold» գերմանական լրագրի մէջ տպվեցաւ Թիֆլիսից մի թղթակցութիւն ցէնզուրական մասնաժողովի դատի մասին «Մշակի» խմբագիր Գրիգոր Աբծրունու դէմ, որ քննվեցաւ Թիֆլիսի նահանգական դատարանում մայիսի 22-ին։ Թղթակիցը հարիւր տալով ամբողջ դատի մասին, ասում է իր կողմից. «Այդ դատը, աւելի լաւ քան մի որ և է նկարագրութիւն լույս է ցցում այն հանգամանքների վրա, որոնց մէջ գտնվում է գաւառական մամուլը, հանգամանքներ, որոնք չատ հեռու են գաւառական մըտաւոր կեանքի զարգացնելուն նպաստելուց, և այդ պատճառով ցանկալի է որ գրած գրվեն որ և է միջոցներ այդ հանգամանքները կանոնաւորելու նպատակով։»

—

Ս. Պետերբուրգի գերմանական «St. Petersb. Herold» լրագիրը արտատպել է «Մշակից» մի աւետարանական գրած նամակը Աէքսանդրապոլից, նոյնպէս և մեր առաջնորդող յոդուածը բողոքականների վերաբերութեամբ «Գոնէ այժմ ամաչէք» վերնագրով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹՈՒՐՔԻԱ

—

Լօնդոնից հեռագրում են «Temps» ֆրանսիական լրագրին հետևեալը։

Կարծում են որ Գլադստոն անելու է այս օրերս մի նշանաւոր յայտնութիւն Համայնքների ժողովի մէջ արևելեան խնդրի վերաբերութեամբ։ Անգլիական այժմեան վիճա-

տրութիւնը այսպէս է բացատրում զանազանութիւնը իր և նախորդ մինիստրութեան հայացքների մէջ արևելեան խնդրի վերաբերութեամբ. պահպանողականները ասում էին որ անհրաժեշտ է Թիւրքիային պահպանել, թէկուզ նա բիծիրմներ չընդունի, իսկ ազատամիտները ասում են որ Օսմանեան պետութեան պահպանվելը հնարաւոր է միայն արմատական և անյապաղ վերանորոգութիւնների պայմանով: Պահպանողականները զուշակում են Թօշէնին անաջողութիւն իր յանձնարարութեան մէջ, ազատամիտների մի փոքրիկ մասն էլ հաւատացած է, որ եթէ սուլթանը մերժի Անգլիայի առաջարկութիւնները, այդ վերջինը բոլորովին ձեռք կը վերցնի արևելեան խնդրից: Բայց ազատամիտների մեծ և ազդող մասը կարծում են, որ Դիզրաէլիի մինիստրութիւնը եռանդով կը շարունակէ գործել, մինչև անգամ սպրդնական անաջողութեանը հանդիպելուց յետոյ: Ասում են որ Բերլինի լրացուցիչ կոնֆերէնցիայի ժամանակ աւստրիական, անգլիական, ֆրանսիական և իտալական նաւերը կերթան Բոսֆորի մէջ, Բ. Դրբան վրա ճնշում ներգործելու դիտաւորութեամբ:

Անգլիական լրագրները շատ գոհ են, որ Թիւրքիան չէ հպատակվում Եւրոպայի պահանջներին: «Spectator» լրագիրը ասում է. «պէտք է վերջացնել արևելեան խնդրի հետ և թէպետև Անգլիան ընդդէմ չէ լինի որ սուլթանը պահպանի իր առաջվայ հեղինակութիւնը, սակայն պէտք է որքան հնար է շուտով ազատել Թիւրքիայի եւրոպական նահանգները և Հայաստանը:»

Ուրիշ անգլիական թերթ «Standard» լրագիրը կարծում է որ Թօշէն խորհուրդ կը տայ սուլթանին կրկին սահմանադրութիւն մտցնել Թիւրքիայում, բայց, աւելացնում է թերթը, մինիստրութեան փոխվելով միայն գործին օգնել չէ կարելի, եթէ մինչև անգամ կառավարութեան գեղը կը յանձնվի Միդհատ Թին կամ Թէյֆիգ-Ալիին:

Կ. Պոլսում հրատարակվող «Հաքիքաթ» թերթ լրագիրը սկսել է նորից խոսք յօդուածներ գրել Անգլիայի դէմ և յարձակվել քրիստոնեաների դէմ առհասարակ և մանաւորապէս հայերի դէմ: Թերթը լրագիրը երևցական է անուանում հայոց խնդիրը և պահանջում է որ Հայաստանը, ինչպէս այդ եղել է Բիկոնսֆիլդի օրով, ոչ թէ Արմենիա, այլ Գիւրդիստան անուանվի: Մահմեդականները, ասում է թերթը թերթը, զոհ են գընացել քրիստոնեաների բռնութեան և հարստահարութեան Ռումելիայում, բայց Ասիայում քրիստոնեաներին այդ չի աջողվի, աւելացնում է «թէրճմանը Հաքիքաթ» և մահմեդականները կը մեռնեն մինչև վերջին մարդ, բայց չեն թոյլ տայ որ Փոքր-Ասիայում վերանորոգութիւններ մտցնվին: Այդ բաներան չէ. թերթը լրագիրը տալել է իր էջերի մէջ մի թղթակցութիւն իբրէ թէ մի քիւրդի ձեռքով գրված, որի մէջ կեղծ քիւրդը զգում է քիւրդերի լուսաւորութիւնը, նրանց հմտութիւնները արաբական և պարսկական լեզուների և մահմեդական կրօնի մէջ, և այն, աւելացնելով որ քիւրդերը բոլորովին վայրենի ցեղ չեն և հաւատացնելով, որ հայոց ազգի քիւրդերի ձեռքով հարստահարվելը հայերի երևակայութեան ծնունդ է: Քիւրդ գրողը ասում է որ հայերը կարողացան խաբել Եւրոպային և ազմուկ գցել, իրանց մասին շատ յօդուածներ տալով տալով եւրոպական լրագիրներում, բայց մխիթարում է իր ցեղակիցներին, հաւատացնելով որ այսուհետև քիւրդերն էլ պէտք է նոյնը անեն և վերջապէս կատարեցանեն որ Արմենիա ասված երկիրն էլ չը կայ աշխարհիս երեսին, այլ Փոքր-Ասիայում կայ Անատոլիա և Քիւրդիստան երկիրները:

Ֆրանսիական «Temps» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը սատիկ ծաղրում է այդ կեղծ քիւրդի նամակը և վերին աստիճանի ծիծաղելի է գտնում նրա սպառնալիքները իբրէ թէ քիւրդերը լաւ կը համարեն մինչև վերջին մարդ մեռնել, քան թէ թոյլ տալ որ Փոքր-Ասիայում վերանորոգութիւններ մտցնվին:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ ԼՕՆԴՈՆՈՒՄ

—

Ֆրանսիական նախկին դեսպանը Լօնդոնում լեռ կանչվեցաւ Փարիզ և Ֆրանսիական սենատի նախագահ ընտրվեցաւ: Փարիզից այժմ հեռագրում են, որ Լօնդոնի մէջ Ֆրանսիական դեսպան նշանակվելու է Նալմել-Լաֆուը և որ այդ լուրը հետզհետէ հաւանականութիւն է ստանում: Ֆրանսիական կառավարութեան այդ մտադրութեան մասին հետևեալ տեղեկութիւններ ենք կարդում լրագիրների մէջ:

Եթէ ճշմարիտ Նալմել-Լաֆուը Լօնդոնի Ֆրանսիական դեսպան կը նշանակվի, Անգլիայի և Ֆրանսիայի փոխադարձ յարաբերութիւնները չափազանց կը լաւանան: 1871 թուականից Լօնդոնում եղած Ֆրանսիական բազմաթիւ դեսպաններից ոչ մէկը չը կարողացաւ հասնել այդ նպատակին:

Դիզրաէլիի մինիստրութեան վարմունքը 1870 թուականի Ֆրանս-գերմանական պատերազմի ժամանակ թէպէտ կատարելապէս հայրենասէր և մինիստրութեան առաջնորդի քաղաքական համոզմունքների հետ բոլորովին համաձայն էր, բայց այնուամենայնիւ նա չափազանց զրգռեց Ֆրանսիական հասարակութեան բոլոր շրջաններին: Ցաղրված պատութիւնը իր անաջողութեան համար ամեն տեղ «արտաքին» պատճառներ էր փնտռում և Անգլիայի անպայման չէզոքութիւնը այդ պատճառներից գլխաւորն էր համարում: Պ. Դիզրաէլիի Ֆրանսիացիների հնամար զրեթէ նոյնքան տեսիլ դարձաւ, որքան և իշխան Բիսմարկ: Քանի որ Դիզրաէլիի նախկին մինիստրութիւնը զոյութիւն ունէր, Ֆրանսիական կառավարութեան յարաբերութիւնները Անգլիայի հետ լարված էին: Լորդ Բիկոնսֆիլդի յաղթութիւնը 1874 թ. ընտրութիւնների ժամանակ ուրախացրեց Ֆրանսիացիներին, որովհետև նրանք Բիկոնսֆիլդի յաղթութեան պատճառը Դիզրաէլիի 1870—1871 թ. արտաքին քաղաքականութիւնն էին համարում: Լորդ Բիկոնսֆիլդ օգուտ քաղեց Ֆրանսիական հասարակութեան այդ տրամադրութենից, բայց երբէք չը բարեկամացաւ հանրապետութեան հետ, իսկ Բերլինի կոնգրէսի ժամանակ հանեց իր դիմակը և 1878 թ. յունիսի 4-ի դաշնադրութեամբ ապացուցեց, որ նա բոլոր ժամանակ խաբում էր Կ. Ֆրանսիային:

Այն ժամանակից Անգլիայի և Ֆրանսիայի յարաբերութիւնները աւելի էլ վատացան: Ֆրանսիական դեսպանը Լօնդոնում մնում էր միայն ձևի և քաղաքավարութեան համար:

Դեսպանի այդ պաշտօնը վարելու համար մէկը միւսի ետևից նշանակվում էին զանազան մարդիկ, որոնք քաղաքական առանձին ընդունակութիւններ չունէին և կարելի է հաստատ ասել, որ նրանցից ոչ մէկը իր կառավարութենից հրաման չէր ստացել Բիկոնսֆիլդի մինիստրութեան հետ բարեկամական յարաբերութիւններ հաստատելու համար:

Ֆրանսիական կառավարութիւնը անպատրաստ էր, երբ ընկաւ Բիկոնսֆիլդի մինիստրութիւնը: Դիզրաէլիի մինիստր ընտրվելը շփոթեցրեց Ֆրանսիայի պետական մարդիկներից շատերին, որոնք դեռ յիշում էին 1870 թուականը, բայց այդ մարդկերանց շրջանի մէջ գտնվեցան այնպիսիները, որոնք հասկացան, թէ Անգլիայի հետ բարեկամանալու ժամանակը հասել է: Դրանցից գլխաւորը Լէօն Գամբետան է: Նա մեծ բարեկամ է անգլիական արտաքին գործերի մինիստրի ընկեր Զարլզ Դիլկէի հետ և հաւատացած է, որ սրա միջնորդութեամբ կարող է շատ բան անել:

Պատգամաւորների ժողովի նախագահի կարծիքները բաժանում է Նալմել-Լաֆուը և և եթէ ճշմարիտ նա կը նշանակվի Լօնդոնի Ֆրանսիական դեսպան, նրա գլխաւոր նպատակը կը լինի վերջ դնել երկու դրացի պետութիւնների սառը յարաբերութիւններին: Նա հեշտ կարող է հասնել իր նպատակին Զարլզ Դիլկէի օգնութեամբ, մանաւանդ եթէ Ֆրէյսինէի մինիստրութիւնը կօգնէ անգլիական կառավարութեանը ստանալ Թիւրքիայից այն զիջումները, որոնց պահանջելու համար պ. Թօշէն գնացել է Կ. Պոլիս:

Եթէ Ֆրանսիայի և Անգլիայի մէջ հաւաձայնութիւն կայանայ, այդ հանգամանքը շատ կը նպաստէ արևելեան հարցի վճռվելուն:

Աւելի ուշ ստացված լրագիրները հաղորդում են, որ Նալմել-Լաֆուը արդէն նշանակվեցաւ դեսպան և շուտով ուղևորվելու է Լօնդոն: Սրբ հանրապետութեան նոր դեսպանը և անգլիական արտաքին գործերի մինիստրի եռանդուն ընկերը կը խորհրդակցին միմեանց հետ, երկու պետութիւնների մէջ բոլորովին այլ յարաբերութիւններ կը հաստատվին: Նոր դեսպանը շատ լաւ հասկանում է, թէ Ֆրանսիան ինչ գնով կարող է ձեռք բերել Անգլիայի պաշտպանութիւնը և բարեկամութիւնը: Պէտք է յուսալ, որ այսուհետև Անգլիայի կողմից սուլթանին ուղղված բոլոր պահանջները կը պաշտպանվին Ֆրանսիայի կողմից: Կարելի է հաստատապէս ասել, որ այսուհետև Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր արևելեան հարցի վերաբերութեամբ կը լինի ոչ թէ Ֆրէյսինէ, այլ Նալմել-Լաֆուը:

Լրագրները գուշակում են, որ արևելեան գործերի պատճառով եւրոպական պետութիւններից երկու կուսակցութիւններ կը կազմվին, որոնցից մէկի մէջ կը մտնեն Ֆրանսիա, Անգլիա և Իտալիա, իսկ միւսի մէջ Գերմանիա և Աւստրո-Ունգարիա և որ Ռուսաստանի շահերը պահանջում են միանալ առաջին կուսակցութեան հետ:

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

Բերլին, 1/13 յունիսի

Ամսոյ 16-ին, ինչպէս ձեզ յայտնի կը լինի հեռագրագրից, այստեղ գումարվելու է միջազգային յանձնաժողով, բաղկացած այստեղ եղած օտար պետութիւնների դեսպաններից, յունական խնդիրը վճռելու նպատակով: Նիստերը կը մնեն Հօէնլոէ իշխանի նախագահութեամբ:

Հայաստանի և Զէյնօգորիայի վերաբերեալ կէտերը Բերլինի աւագաժողովի դաշնագրի այս յանձնաժողովը վճռելու չէ: Առաջ լրագրների մէջ ասվում էր, որ երեք հարցերն էլ վճռելու համար պետութիւնները մի ընդհանուր, համաձայն գրութիւն կուղղեն Թիւրքիային (Collectiv-Note), բայց այժմ յայտնվում է, որ ամեն մի կառավարութիւն Թիւրքիային կը դիմէ առանձնապէս, ուղղելով նրան երկու երկու գրութիւններ, որոնցից մինը ցունաստանի սահմանափոխութեան մասին կը լինի, իսկ միւսը Հայաստանի վերանորոգութիւնների և Զէյնօգորիայի սահմանների մասին պիտի խօսի: Պետութիւնների պահանջները թէև առանձին առանձին կը ներկայացվին Կ. Պոլսի կարդինալին, բայց բոլորն էլ համանման (identisch) կը լինեն:

Ինչ կը լինի այդ նոր քաղաքական քայլի հետևանքը,—ի հարկէ անհնարին է այժմ նախագուշակել: Ցաւալին միայն այն է, որ բացի յունական խնդրից, ուրիշ խնդիրներով չը պիտի զբաղվի Բերլինի կոնֆերէնցիան:

Ուրեմն իմ անցեալ նամակումս յայտնած կարծիքը, որ լաւ կը լիներ եթէ Թիւրքիայի հայերի կողմից էլ պատգամաւորներ ուղարկվին Եւրոպա, այժմ ապարդիւն կը լիներ իրագործել, երբ «Հայաստանի խնդիրը», որ և պաշտօնական կերպով այժմ այսպէս է անուանվում, պիտի վճռվի, ինչպէս երևում է, միմիայն գրաւոր յարաբերութիւնների միջոցով:

Դա մի կոմէդիա է, իսկապէս, Թիւրքիան ոչինչ չի անի, եթէ նրան չը սպիպեն: Դա հէնց որ լսեց, տեղեկացաւ որ եւրոպական պետութիւնները պատրաստվում են նոր պահանջներ առաջարկել իրան, իսկոյն մի հաթը հրատարակեց որ մտցնվելու վերանորոգութիւնները անյապաղ սկսեն իրագործվել: Մի և նոյն ժամանակ ինքն էլ եւրոպայի ուշադրութիւն է դարձնում Բերլինի կոնգրէսում վճռված այն կէտերի վրա, որոնց եւրոպան դեռ չէ կատարել: Այդպիսով Թիւրքիան աշխատում է արդարանալ եւրոպայի առջև, ցոյց տալով որ ինքն մեռնակ չէ, որ յանձն առած խոստումները չը կատարեց, այլ նոյն դանցաւորութիւնը երկու կողմից էլ է եղել....

Թիւրքիան, լաւ դերասանի պէս, ոչինչ չէ խնայում որ ներկայացումն իրականութեանը նմանվի. հաթը մի կողմից, իսկ միւս կողմից մինիստրութեան մէջ փոփոխութիւնները կարող էին շատերին կարծել տալ, որ Բ. Դուռը ճշմարիտ դիտաւորութիւն ունի մի բան անելու. Բայց ով չը գիտէ նրա խորամանկ ձևերը....

Դուցէ Յունաստանի հարցը կը վճռվի և չատ չուտ,—իսկ մնացածը կը մնայնոյն անմեղանական դրութեան մէջ, ինչպէս և այժմ, կամ կը ստանայ կէս կերպով վճռած, կիսաւէիր ձև, ինչպէս է այժմ Բոլգարիայի, Արևելեան Ռումելիայի և Զէյնօգորիայի դրութիւնը.

Ուրիշի գործերի մէջ խառնվել այսպէս խրատող կերպով և մի և նոյն ժամանակ այսպէս անորոշ ձևով, ինչպէս այդ արել է Բերլինի կոնգրէսը Թիւրքիայի վերաբերութեամբ, միշտ ապարդիւն ջանք կը լինի. Միայն վճռողական ընթացքը կարող է ցանկացած նպատակին հասցնել: Ֆրանսիական խօսքը «Ote-toi de là, que je m'y mette», գուցէ անարդար սկզբունք է, բայց դա միակ ազդու միջոց է ցանկացածը դուրս բերելու և վերջապէս մի արմատական փոփոխութիւն յառաջացնելու.

Ես կը հետեւեմ կոնֆերէնցիայի նիստերին և վերնիներին, որպէս զի կարողանամ նրանց մասին «Մշակին» հաղորդել ոչ թէ, ի հարկէ, այն պատմառով որ ես մի առանձին հաճարութիւն ունենայի դէպի Յունաստանը, այլ որպէս զի տեսնեմ թէ պրոեքտ ինչ այժ ունեն եւրոպական պետութիւնները և ինչ ազդեցութիւն ունեն նրանք Թիւրքիայի վրա և կարող են արդեօք այդ խորամանկ կառավարութեանը այն զիջումներին սիրել, որոնց պահանջում են նրանից.... թէ այդ էլ մի անցողական թատրոնական ներկայացումն կը լինի, որի հետևանքները միայն թղթի վրա կը մնան և երբէք իրականութիւն չը պիտի դառնան....

Այժմ այստեղի օրվայ ամենանշանաւոր լուրը հաղորդեմ ձեզ: Մի քանի օր սրանից առաջ այստեղի Thiergarten ասված հրապարակական այգիում Գեօթէի արձանը կանգնեցրին և արձանի բացմանը ներկայ էին կայսրը և կայսերական ընտանիքը: Դա մի մեծ ոտն էր Բերլինի համար և չատ շրջաններում ու մասնաւոր տների մէջ ուտեցնին այս եղելութիւնը զանազան ձևով: Արձանը մարմարիոնից է ամբողջապէս և պատուանդանը, որ նմանապէս մարմարիոնից է, շրջապատված է երեք խմբերով (գրուպներով), որոնք ներկայացնում են՝ Լիրիկա, Էպիկա և Դրամա: Դրանք երեք կանայք են, որոնց կողքին կանգնած են մի մի տղաներ: Լիրիկան գրված ունի մի ձեռքով մանուկին, որ սէր է ներկայացնում (Amor) իր նետը ձեռքին բռնած, Էպիկան մի գրքի մէջ է նայում և երեխան էլ ուշադրութեամբ լսում է, Դրաման սգաւոր է, սուգ է արտայայտում իր երեսի վրա և նրա կողքին կանգնած տղան, նմանապէս սուգին մասնակից է: Ամբողջ արձանը այնպիսի գեղեցիկ տպաւորութիւն է գործում, ինչպէս տպիտ պատահում է տեսնել:

Անդրէաս Աբեղեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 յունիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէք 93 կ. 12½ կ., երկրորդ 92 բ. 37½ կ., երրորդ բ3 բ. 50 կ., չորրորդ 93 բ. 12½ կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէք 231 բ., երկրորդ 224 բ. արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէք 91 բ. 50 կ., երկրորդ 91 բ. 75 կ., երրորդ 91 բ. 50 կ., ոսկի 7 բ. 75 կ., Ռուսաց 1 բուբլ Լօնդոնի վրա արժէք 25¹⁹/₃₂ պէնս, ռուսաց 100 բուբլ Բերլինի վրա 129 մարկ 50 պֆ., Համբուրգի վրա արժէք 219 մարկ, 25 պֆ., Փարիզի վրա 269 ֆր.: Բօրսայի տարադրութիւնը ամուր է:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՍԵՐՈՒՆԻ